Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս:

Պարծանքով ու փառքով լեցուն ազգային մեր տոնի խորհրդով ուրախ են այսօր մեր հոգիները: 19 տարի առաջ նվիրական այս օրն էր, որ իրագործվեց ազատ եւ անկախ պետականություն ունենալու դարավոր մեր տեսիլքը: Տոնական խնդության հետ հույսերով ենք լեցուն, որ ազատ ու ինքնիշխան մեր երկիրը ազգիս միասնական ջանքերով պիտի զորանա ու բարգավաճի եւ համախմբած ի սփյուռս աշխարհի իր զավակներին, դառնա հայ կյանքի պատվարն ու հենարանը:

Գոհություն բարձրացնենք առ Ամենակալ եւ բազմապատկենք մեր նվիրումն ու ջանքերը՝ շարունակելով աննվազ նախանձախնդրությամբ խնամք ու հոգածություն բերել՝ ի սեր հայրենի երկրի, հոգեւոր եւ ազգային մեր կյանքի առաջընթացի:

Միածնաէջ Սրբություն Սրբոց Մայր Տաճարից աղոթք բարձրացնելով առ Բարձրյալն Ամենակալ՝ հայցում ենք, որ երկնային շնորհների ու օրհնության ներքո խաղաղ ու բարօր ապրի համայն մեր ժողովուրդը՝ միշտ ուրախ ու հոգենորոգ իր ազատ կյանքի նոր հաղթանակների ու ձեռքբերումների պարծանքով: